ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

14 փետրվարի 2020թ. **N 10-Ա**
ք.Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅՈՎ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ և 11-րդ մասերով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով, 51-րդ հոդվածի 2-րդ մասի 24.6-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի քարոզչության կողմերին՝

1) հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) հանրային հեռուստատեսությամբ անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) հանրային ռադիոյով անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2020թ. փետրվարի 14-ի թիվ 10-Ա որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅՈՎ ԵԹԵՐԱԺԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի քարոզչության կողմերին քարոզչության ժամանակ հանրային հեռուստատեսությամբ և (կամ) հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրվում է հավասար պայմաններով՝ «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) և սույն կարգի պահանջներին համապատասխան:

2. Սույն կարգին հապատասխան հանրային հեռուստատեսության և հանրային ռադիոյի եթերաժամից կարող են օգտվել «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերը (այսուհետ՝ քարոզչության կողմ), իսկ այլ անձինք կարող են օգտվել միայն քարոզչության կողմի լիազոր ներկայացուցչի գրավոր համաձայնության հիման վրա՝ համաձայնության մեջ նշված պայմաններով, որոնք չեն կարող հակասել քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված պահանջներին:

Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի քարոզչության կողմերին՝ քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային հեռուստատեսությամբ եթերաժամ տրամադրվում է ժամը 20:00-ից որոշման N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի քարոզչության կողմերին՝ քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրվում է ժամը 13:30-ից և ժամը 19:45-ից որոշման N 3 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

4. Տեխնիկական անհրաժեշտությունից ելնելով, հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի կողմից նշված ժամանակահատվածը կարող է տեղաշարժվել, բայց ոչ ավելի, քան 30 րոպե:

5. Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի քարոզչության կողմերին քարոզչություն իրականացնելու նպատակով սույն կարգի 2-րդ կետով սահմանված ժամանակահատվածում հանրային հեռուստատեսությունը տրամադրում է 60 րոպե անվճար և մինչև 120 րոպե վճարովի հիմունքներով եթերաժամ, ընդ որում՝

1) 2020թ. փետրվարի 20-ից մինչև 2020թ. մարտի 18-ը ներառյալ (28 օր)՝ օրը 1 րոպե անվճար և մինչև 2 րոպե վճարովի հիմունքներով.

2) 2020թ. մարտի 19-ից մինչև 2020թ. ապրիլի 3-ը ներառյալ (16 օր)՝ օրը 2 րոպե անվճար և մինչև 4 րոպե վճարովի հիմունքներով:

6. Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի քարոզչության կողմերին քարոզչություն իրականացնելու նպատակով, սույն կարգի 3-րդ կետով սահմանված ժամանակահատվածներում, հանրային ռադիոն տրամադրում է 120 րոպե անվճար և մինչև 180 րոպե վճարովի հիմունքներով եթերաժամ, ընդ որում՝

1) 2020թ. փետրվարի 20-ից մինչև 2020թ. մարտի 18-ը ներառյալ (28 օր)՝ օրական երկու անգամ՝ 1-ական րոպե անվճար և մինչև 2-ական րոպե վճարովի հիմունքներով.

2) 2020թ. մարտի 19-ից մինչև ապրիլ 1-ը ներառյալ (14 օր)՝ օրական երկու անգամ՝ 2-ական րոպե անվճար և մինչև 2-ական րոպե վճարովի հիմունքներով.

3)2020թ. ապրիլի 2-ին և ապրիլի 3-ին ներառյալ (2 օր)՝ օրական երկու անգամ՝ 2-ական րոպե անվճար և մինչև 3-ական րոպե վճարովի հիմունքներով:

7. Քարոզչություն իրականացնելու նպատակով հեռուստատեսային եթերաժամը տրամադրվում է Հայաստանի հանրային հեռուստաընկերության վերգետնյա հեռարձակմամբ Առաջին ալիքի եթերում, իսկ ռադիոեթերաժամը՝ Հայաստանի հանրային ռադիոընկերության 69.7 ՄՀց գերկարճ և FM հանրապետական ցանցով (Երևանում 107.7 ՄՀց):

8. Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի քարոզչության կողմի ներկայացուցիչներին քարոզչություն իրականացնելու նպատակով հանրային հեռուստատեսությամբ կամ հանրային ռադիոյով տրամադրվում է ուղիղ եթեր, նրանց ցանկությամբ՝ նաև հաղորդավարի մասնակցությամբ, կամ հեռարձակվում է նրանց կողմից ներկայացված տեսաերիզը (ձայներիզը): Հաղորդավար տրամադրվելու դեպքում պահպանվում է լրագրողի գործունեության ազատության սկզբունքը:

9. Եթերաժամը տրամադրվում է ըստ քարոզչության կողմի նախապես ներկայացված հայտերի՝ հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի և Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի քարոզչության կողմի միջև սույն կարգին համապատասխան կնքված պայմանագրի հիման վրա, որը կոմղերի համար պետք է սահմանի հավասար պայմաններ:

10. Եթերաժամ տրամադրելու համար պայմանագիր կնքելիս որպես կողմի ներկայացուցիչ հանդես է գալիս՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գրանցված լիազոր ներկայացուցիչը կամ նրա կողմից լիազորված այլ անձ: Պայմանագիր կնքելու համար ներկայացվում է լիազոր ներկայացուցչի վկայականի լուսապատճենը կամ նրա կողմից տրված լիազորագիրը, լիազոր ներկայացուցչի կամ լիազորված անձի անձնագիրը, վճարովի հիմունքներով եթերաժամից օգտվելու համար՝ նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բացված՝ քարոզչության հիմնադրամի ժամանակավոր հատուկ հաշվեհամարը: Հայաստանի հանրային հեռուստաընկերության հետ պայմանագիր կնքելու համար կողմի ներկայացուցիչը պետք է դիմի՝ ք. Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 26 հասցեով (հեռ. (010)65-00-15 (ներքին 1-01)), իսկ Հայաստանի հանրային ռադիոընկերության հետ պայմանագիր կնքելու համար՝ ք.Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեով (հեռ. (010) 57-09-70):

Պայմանագիրը պետք է կնքվի առաջին եթերաժամից ոչ ուշ, քան 1 օր առաջ:

11. Ուղիղ եթերի դեպքում կողմի ներկայացուցիչը համապատասխանաբար Հայաստանի հանրային հեռուստաընկերություն (ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 26) կամ Հայաստանի հանրային ռադիոընկերություն (ք. Երևան, Ալեք Մանուկյան 5, Ռադիոտուն) պետք է ներկայանա հերթական եթերաժամից առնվազն 40 րոպե առաջ:

Տեսանյութեր հեռարձակելու դեպքում այդ տեսանյութերը պետք է ներկայացվեն Հայաստանի հանրային հեռուստաընկերություն (ք.Երևան, Նորք, Գ. Հովսեփյան 26) ոչ ուշ, քան համապատասխան տեսանյութը հեռարձակելու օրվա ժամը 16:00 և պետք է համապատասխանեն հետևյալ տեխնիկական պահանջներին՝

Ֆորմատ՝ MXF

Video – HD 1920 x 1080

Frame rate - 50i (25 fps)

Video Bit Rate – 35 Mbps, VBR

Ձայներիզներ հեռարձակելու դեպքում, այդ ձայներիզները «WAV» կամ «MP3» ֆորմատով պետք է ներկայացվեն Հայաստանի հանրային ռադիոընկերություն (ք.Երևան, Ալեք Մանուկյան 5, Ռադիոտուն) քարոզչության համար սահմանված եթերաժամի սկզբից առնվազն 2 ժամ առաջ:

12. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի եթերաժամը որոշման համապատասխանաբար N 2 և N 3 հավելվածներով սահմանված ժամանակացույցերին համապատասխան չօգտագործելու դեպքում կողմին դրա փոխարեն այլ եթերաժամ չի տրամադրվում:

13. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի վճարովի հիմունքներով եթերաժամից օգտվելու համար վճարումները կատարվում են համապատասխան հիմնադրամի միջոցներից՝ անկանխիկ (փոխանցումով):

14. Հանրային հեռուստատեսության կամ հանրային ռադիոյի կողմից վճարովի հիմունքներով եթերաժամ տրամադրվում է, եթե մինչև եթերաժամի սկիզբը համապատասխանաբար հանրային հեռուստատեսություն կամ հանրային ռադիո ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի անկանխիկ վճարման (փոխանցման) հանձնարարականը:

15. Հանրաքվեի քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումները վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնելիս ձայնագրվում և տեսագրվում են: Դրանք պահպանվում են առնվազն երեք ամիս:

Արգելվում է քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումներն ընդմիջել առևտրային գովազդով:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2020թ. փետրվարի 14-ի թիվ 10-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի քարոզչության կողմին

Հանրային հեռուստատեսությամբ եթերաժամ տրամադրելու

ԱՄԻՍ	Փետրվար										Մարտ											
ՕՐԸ	20	21	22	23	24	25	26	27	28	29	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																					
1. «ԱՅՈ» ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1
2. «ՈՉ» ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2

ԱՄԻՍ	Մարտ																			Ապրիլ		
ՕՐԸ	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	1	2	3
ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը																					
1. «ԱՅՈ» ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1
2. «ՈՉ» ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2

Ծանոթություն **1. Աղյուսակի «Քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի սյունակներում նշված 1 և 2 թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է:**

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2020թ. փետրվարի 14-ի թիվ 10-Ա որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի քարոզչության կողմին

Հանրային ռադիոյով եթերաժամ տրամադրելու

ԱՄԻՍ		Փետրվար										Մարտ											
ՕՐԸ	ժամ	20	21	22	23	24	25	26	27	28	29	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		Քարոզչության եթերաժամի տրամադրման																					
1. «ԱՅՈ» ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ	(13:30)	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2
	(19:45)	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1
2. «ՈՉ» ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ	(13:30)	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1
	(19:45)	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2

ԱՄԻՍ	ժամ	Մարտ																			Ապրիլ		
ՕՐԸ		13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	1	2	3
ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		Քարոզչության եթերաժամի տրամադրման																					
1. «ԱՅՈ» ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ	(13:30)	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2
	(19:45)	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1
2. «ՈՉ» ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄ	(13:30)	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1
	(19:45)	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2

Ծանոթություն **1. Աղյուսակի «Քարոզչության եթերաժամի տրամադրման հերթականությունը» մասի սյունակներում նշված 1 և 2 թվերը եթերաժամի տրամադրման հերթականությունն է**
2. Քարոզչության կողմի դիմաց «1» տողում նշված թիվն այդ օրվա առաջին եթերաժամի, իսկ «2» տողում նշված թիվը՝ երկրորդ եթերաժամի տրամադրման հերթականությունն է: